ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի փետրվարի 26-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04»**

Դատական դեպարտամենտի կարիքների շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 23.02.2024թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 26.02.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ բաժնով սահմանված է ներկայացվող գնային առաջարկի պահանջները՝ տոկոսային արտահայտությամբ, ինչպես նաև 4-րդ բաժնում սահմանված 2.1) կետով պահանջվում է հայտարարություն՝ ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու, չհանդիսանալու վերաբերյալ:

Վերոնշյալ պահանջները հակասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 2) ենթակետի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով սահմանված կարգով հրապարակված հրավերի տիպային օրինակների դրույթներին և պահանջներին:

Խնդրում ենք տալ պարզաբանում, թե ինչու են փոփոխվել Ձեր կողմից հրավերի վերոնշյալ պահանջները, որոնք հակասում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման և հրավերի օրինակելի ձևերի դրույթներին: Սահմանված օրինակելի ձևի փոփոխման համար համապատասխան հիմքեր լինելու պարագայում խնդրում ենք տրամադրել դրանք»:

<u>Պարզաբանում</u>

«Հայտնում ենք, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի կազմակերպման ժամանակ հնարավոր չէ կանխատեսել կատարվելիք աշխատանքների ծավալները, ուստի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է տոկոսային արտահայտությամբ, իսկ վերոնշյալ հրավերի 4-րդ մասի «2.1)» կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ հայտարարություն մասնակցի ավելացված արժեքի հարկ վճարող հանդիսանալու/չհանդիսանալու վերաբերյալ, նախատեսվել է հետագայում պայմանագիրը կնքելիս պայմանագրի ընդհանուր առավելագույն գնի մեջ ավելացված արժեքի հարկը ներառելու կամ չներառելու մասին նշում կատարելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը բանավոր կերպով համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության (Լիազորված մարմնի) հետ»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04»» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: